

## Ապահով համացանց 2016

### 7 դասարան

#### Դասի նպատակը՝

Համացանցի ապահով օգտագործման համար անհրաժեշտ գիտելիքների ապահովում

#### Դասի խնդիրները՝

**Ուսուցողական** – Ամրապնդել համացանցի ապահով և անվտանգ օգտագործման կարևորության և անհրաժեշտության մասին գիտելիքները:

**Զարգացնող**– Համացանցից օգտվելու ընթացքում ինքնուրույնության, ուշադրության, պատասխանատվության և քննադատական մտածողության զարգացում:

#### Դաստիարակչական՝

- Աշակերտի արժեքային համակարգի ճիշտ ձևավորում
- Էթիկայի նորմերի իմացությունը և կիրառումը համացանցում

**Պարագաները** – համակարգիչ, պրոյեկտոր, ցուցատախտակ, պաստառներ, գունավոր թղթեր:

#### Դասի պլան

- Կազմակերպչական մաս
- Դասի նպատակների և խնդիրների հստակեցում -3 րոպե
- Համակարգչային ներկայացումների -7 րոպե
- Վիկտորինա-13 րոպե

- Բանաստեղծություն -2 րոպե
- Վտանգների բացահայտում և լուծումների ներկայացում-10 րոպե
- Բանավոր թեստ ինտերնետային կախվածություն- 5 րոպե
- Ամփոփում-անդրադարձ: Գնահատում- 5 րոպե

### Դասի ընթացքը

- ✓ **Կազմակերպչական մաս**
- ✓ **Դասի նպատակների և խնդիրների հստակեցում**
- ✓ Աշակերտների կողմից **Ապահով համացանց** թեմայով պատրաստված համակարգչային ցուցադրումների և **Scratch** ծրագրի միջավայրում ստեղծած խաղի ներկայացում և քննարկում:  
<http://bit.ly/1QPM31J>  
<http://bit.ly/1XokoH0>  
<http://bit.ly/1pFw90R>  
<https://scratch.mit.edu/projects/99205967/#fullscreen>
- ✓ **Վիկտորինա** “Քրոմ Մոզիլյանի արկածները համացանցում”  
Խաղը վարում են նույն դասարանի երկու աշակերտ: Դասարանը բաժանել 2 խմբի, ընտրել խմբի ավագներին և համակարգչային ցուցադրման միջոցով անցկացնել վիկտորինան: Վերջում ամփոփել արդյունքները: <http://bit.ly/22c2az7>
- ✓ **Քարտերի միջոցով** բացահայտել համացանցում առկա վտանգները, գտնել համապատասխան լուծումը: Գունավոր թղթերի վրա գրված վտանգները և լուծումները փակցնել սարդոստայնի համապատասխան ամպոտ և արևոտ հատվածներում:
- ✓ **Բանաստեղծություն** համացանցում ապահով լինելու մասին: Ընթերցում է հեղինակը 7 դասարանի աշակերտուհի Անահիտ Մկրտչյանը

## ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Ծածկագիր ու ծածկանուն,  
Անուն ու ազգանուն,  
Տան համար ու հասցե,  
Հատկապես էլեկտրոնային հասցե  
Չվստահե՛ս բոլորին ,  
Հատկապես անծանոթին:  
Համացանցից դուրս այս տարիքում,  
Ցանկալի չէ շփում, հանդիպում:  
Սոց.կայքեր ու վեբ էջեր ,  
Բնական է կայցելես,  
Էթիկան կպահպանես ,  
Բարեկիրթ միշտ կլինես:  
Կասկածելի նամակներ ,  
Սուտ ու կեղծ տեղեկություններ,  
Շփոթեցնող գովազդներ,  
Չարամիտ առաջարկներ,  
Երբ տեսնես դու էկրանին  
Տեղեկացրու մեծերին:  
Դա վիրուս է չարագործ,  
Որն անում է շատ վատ գործ,  
Կներխուժի այն համակարգիչ ,  
Ու կխափանի ամեն ինչ:  
Թե որ լսես խորհուրդներս,  
Ու կատարես հրահանգներս,  
Համացանցից ապահով,  
Դու կօգտվես ամենօր:

Աշտարակի N2 դպրոցի

աշակերտուհի Անահիտ Մկրտչյան

✓ **Ինտերնետային կախվածության բացահայտում աշակերտների մոտ:**

Ինտերնետային կախվածությունը մեծ չարիք է դարձել մարդկության համար: Ինչը կարող է մեզ հուշել ունենք կախվածություն, թե ոչ: Ինչքան շատ են մեր դրական պատասխանները, այնքան մեծ է կախվածության հավանականությունը

1. Անընդհատ սոցիալական կայքերի, անձնական և էլփոստը ստուգելու ցանկությունը
2. Համակարգչի մոտ լավ ինքնագզացողությունը, իսկ համակարգչից հեռու գտնվելու ժամանակ դատարկության, դեպրեսիայի, լարվածության զգացողությունը
3. Համակարգչից կտրվելու անընդունակությունը
4. Աշխատանքի կամ ուսման հետ խնդիրների առաջացումը
5. Ձերքի մկանների գերլարվածության հետևանքով ցավի զգացողությունը
6. Չորություն աչքերում
7. Միգրենանման գլխացավերը
8. Մեջքացավերը
9. Անկանոն սնվելը
10. Քնի խանգարումները

✓ **Ամփոփում-անդրադարձ: Գնահատում: Տնային հանձնարարություն**

Իրագեկման թերթիկների պատրաստում ծնողների համար օգտվելով **Safe.am** կայքից դպրոցի ծնողներին տրամադրելու և հետագայում համայնքում տարածելու նպատակով:

Նախորդ տարվա աշակերտները, որոնք արդեն յուրացրել են այս թեման, պատրաստել էին իրագեկման թերթիկներ և այս տարի ապահով համացանցի միջազգային օրվա առթիվ 2016թ փետրվարի 9-ին քաղաքի տարբեր վայրերում բաժանեցին դրանք: Նկարները հետևյալ հղումով <http://bit.ly/1RIghkV>

**Օգտակար հղումներ՝**

<http://safe.am/>

<http://safe.am/report/The-Next-Click-Armenian.pdf>

**Դասն անցկացրեց Աշտարակի թիվ 2 դպրոցի Ինֆորմատիկայի ուսուցչուհի Նարինե Մեսրոպյանը**